# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2024 թվականի N 2601-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՌ ԴԱՎԹԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԻՐ ՀՈՐ՝ ԴԱՎԻԹ ՌԱՖԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի սեպտեմբերի 3-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել փաստաբան՝ 27.11.1984 թվականին ծնված Արփինե Գարեգինի Հայրապետյանը (լիազորված անձ) (հիմք՝ լիազորագիր, տրված՝ 02.09.2024 թվականին) (նույնականացման քարտ՝ 008874521) խնդրելով Գոռ Դավթի Մարտիրոսյանին (անձնագիր՝ AV0495721, տրված՝ 27.10.2022 թվականին 016-ի կողմից) նշանակել պատրոն (օգնական) իր հոր՝ 17.05.1959 թվականին ծնված Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AS0519733, տրված՝ 11.03.2019 թվականին 007-ի կողմից) նկատմամբ:

Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանը երկրորդ խմբի հաշմանդամ է (հիմք՝ տեղեկանք №1513383, տրված՝ ԲՍՓՀ-ի կողմից):

Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանը համաձայն է, որպեսզի իր որդին՝ Գոռ Դավթի Մարտիրոսյանը նշանակվի պատրոն (օգնական) իր նկատմամբ:

Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանի կինը՝ Գայանե Կարլենի Մարտիրոսյանը տվել է համաձայնություն, որ իր ամուսնու նկատմամբ պատրոն (օգնական) նշանակվի Գոռ Դավթի Մարտիրոսյանը:

Գոռ Դավթի Մարտիրոսյանի հայրը՝ Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանը ունի իր օգնության և խնամքի կարիքը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով փաստաբան՝ Արփինե Գարեգինի Հայրապետյանի (լիազորված անձ) 2024 թվականի սեպտեմբերի 3-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 14757 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 5-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել պատրոնաժ՝ Դավիթ Ռաֆիկի Մարտիրոսյանի (անձնագիր՝ AS0519733) նկատմամբ և պատրոն (օգնական) նշանակել նրա որդուն՝ Գոռ Դավթի Մարտիրոսյանին (անձնագիր՝ AV0495721):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Արփինե Գարեգինի Հայրապետյանին (լիազորված անձ) պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«09» սեպտեմբերի 2024 թվականի N2600-Ա**

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՕՖԻԿ ՍԵՅՐԱՆԻ ՄԻՐԻՋԱՆՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ՔՐՈՋ՝ ԱՆԱՀԻՏ ՌՈԲԵՐՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2024 թվականի հունիսի 20-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան 1 նրբանցք 10/8 տան բնակիչ՝ Օֆիկ Սեյրանի Միրիջանյանը (անձնագիր՝ AS0419271, տրված՝ 07.11.2018 թվականին 001-ի կողմից)՝ խնդրելով իրեն նշանակել հոգաբարձու իր անչափահաս քրոջ՝ 11.04.2009 թվականին ծնված Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303410) նկատմամբ:

Երեխայի մայրը՝ Հռոմսիմե Պատվականի Միրիջանյանը մահացել է 2024 թվականի փետրվարի 24-ին (հիմք՝ մահվան վկայական X-ԻԿ №606019):

Երեխայի հայրը՝ Ռոբերտ Կաղլենի Խաչատրյանը տվել է համաձայնություն, որ իր անչափահաս դստեր՝ Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի խնամակալ համարվի Օֆիկ Սեյրանի Միրիջանյանը (հիմք՝ համաձայնություն, տրված՝ ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից, գրանցված է գրանցամատյան թիվ 4610-ով):

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 19 օգոստոսի 2024 թվականի N2414-Ա որոշմամբ անչափահաս՝ Անահիտ Ռոբերտի Խաչատրյանը հաշվառվել է որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Օֆիկ Սեյրանի Միրիջանյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

Համաձայն «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի Օֆիկ Սեյրանի Միրիջանյանը իր անչափահաս քրոջ՝ Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի հետ համատեղ բնակվում է Գյումրի քաղաքի Կ.Դեմիրճյան 1 նրբանցք 10/8 տանը (հիմք՝ տեղեկանք, տրված՝ 12.07.2024 թվականին N.1244):

Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տվել է դրական նախնական եզրակացություն (դիրքորոշում) անչափահաս՝ Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի նկատմամբ Օֆիկ Սեյրանի Միրիջանյանին խնամակալ նշանակելու վերաբերյալ (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի նախնական եզրակացություն (դիրքորոշում), N835 տրված՝ 02.09.2024 թվականին):

Ելնելով անչափահաս՝ Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ

հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Օֆիկ Սեյրանի Միրիջանյանի 2024 թվականի հունիսի 20-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 10764 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել հոգաբարձություն, Օֆիկ Սեյրանի Միրիջանյանին (անձնագիր՝ AS0419271) նշանակել հոգաբարձու իր անչափահաս քրոջ՝ 11.04.2009 թվականին ծնված Անահիտ Ռոբերտի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №303410) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Օֆիկ Սեյրանի Միրիջանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«09» սեպտեմբերի 2024 թվականի N2599-Ա

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՐԴՈՒՀԻ ԿԱՄՍԱՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՆՉԱՓԱՀԱՍ՝ ՆԱԶԵԼԻ ՂԵՎՈՆԴԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2024 թվականի օգոստոսի 16-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Շիրակի մարզի Արթիկ համայնքի Մեծ Մանթաշ գյուղի բնակիչ՝ Վարդուհի Կամսարի Վարդանյանը (նույնականացման քարտ՝ 007556442)՝ խնդրելով իրեն նշանակել հոգաբարձու անչափահաս՝ 25.07.2007 թվականին ծնված Նազելի Ղևոնդի Նազարեթյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ868779) նկատմամբ:

Նազելի Ղևոնդի Նազարեթյանը հաշվառված է որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա:

2023 թվականի հուլիսի 21-ից Նազելի Ղևոնդի Նազարեթյանը խնամվում է «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում:

Երեխայի մայրը՝ Թեհմինե Աղոյի Կոստանյանը մահացել է 2017 թվականի փետրվարի 21-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ247821):

Երեխայի հայրը՝ Ղևոնդ Ժորայի Նազարեթյանը մահացել է 2019 թվականի փետրվարի 3-ին (հիմք՝ պետական վկայական մահվան մասին ԲԱ247824):

«ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ Ա/Կ» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեղեկության համաձայն դիմումատուն՝ Վարդուհի Կամսարի Վարդանյանը չի տառապում ոչ մի հիվանդությամբ (քաղվածքը կցվում է):

Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնը տրամադրել է տեղեկանք, որ անչափահաս՝ Նազելի Ղևոնդի Նազարեթյանի լավագույն շահից է բխում նրա խնամքը Վարդուհի Կամսարի Վարդանյանի կողմից կազմակերպելը (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի տեղեկանք, N 841 տրված՝ 03.09.2024 թվականին):

Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային կենտրոնը տվել է նախնական դրական եզրակացություն (դիրքորոշում) Վարդուհի Կամսարի Վարդանյանին անչափահաս՝ Նազելի Ղևոնդի Նազարեթյանի նկատմամբ հոգաբարձու նշանակելու վերաբերյալ (հիմք՝ Միասնական սոցիալական ծառայության Արթիկի տարածքային կենտրոնի նախնական եզրակացություն (դիրքորոշում), N62 տրված՝ 03.09.2024 թվականին):

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Նազելի Ղևոնդի Նազարեթյանը տվել է համաձայնություն, որ իր նկատմամբ հոգաբարձու ճանաչվի Վարդուհի Կամսարի Վարդանյանը:

Ելնելով անչափահաս՝ Նազելի Ղևոնդի Նազարեթյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 35-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի՝ Վարդուհի Կամսարի Վարդանյանի 2024 թվականի օգոստոսի 16-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 13847 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել հոգաբարձություն, Վարդուհի Կամսարի Վարդանյանին (նույնականացման քարտ՝ 007556442) նշանակել հոգաբարձու անչափահաս՝ 25.07.2007 թվականին ծնված Նազելի Ղևոնդի Նազարեթյանի (պետական վկայական ծննդի մասին՝ ԲԱ868779) նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդուհի Կամսարի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

09.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

**ՈՐՈՇՈՒՄ**

«09» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2598-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԹԵՆԻՍԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության թենիսի պատանիների 2024 թվականի սեպտեմբերի 17–23-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով թենիսի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշաման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 9-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության թենիսի պատանիների առաջնությանը մասնակցելու համար 2024 թվականի սեպտեմբերի 17–23-ը քաղաք Երևան գործուղել թվով 11 մարզիկի և 2 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 39.000(երեսունինը հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք.Գյումրի**

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
սեպտեմբերի 09-ի N 2598-Ա որոշման

# ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության թենիսի պատանիների առաջնության **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

| Թիվ | Ազգանուն | Անուն | Մարզիկ/ մարզիչ | Անձնագիր | Հաշվեհամար | Գումար |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Գևորգյան | Սամվել | Մարզիկ | AL0475951 | 1570030295666400 | **3.000** |
| 2. | Հովհաննիսյան | Էմմա | Մարզիկ | AV0634723 | 163000033072 | **3.000** |
| 3. | Մանուկյան | Մարիանա | Մարզիկ | AL0234946 | 1570084073530700 | **3.000** |
| 4. | Հովհաննիսյան | Անահիտ | Մարզիկ | AX0259727 | 1570056764557600 | **3.000** |
| 5. | Ավետիսյան | Սոֆի | Մարզիկ | AT0338194 | 1570043155271500 | **3.000** |
| 6. | Թոսունյան | Տիգրան | Մարզիկ | AL0652138 | 1570032385893800 | **3.000** |
| 7. | Հակոբյան<br>Հովհաննիսյան | Միլենա<br>Էլմիրա | Մարզիկ<br>ծնող | AV0254058 | 19300944209900 | **3.000** |
| 8. | Սարգսյան | Լուսինե | Մարզիկ | AL0344273 | 1570087094360900 | **3.000** |
| 9. | Աղայան | Մանվել | Մարզիկ | AU0404790 | 220540700949000 | **3.000** |
| 10. | Աղայան<br>Աղայան | Հռիփսիմե<br>Թորգոմ | Մարզիկ<br>ծնող | AP0635038 | 2050158017857002 | **3.000** |
| 11. | Աղայան | Սամվել | Մարզիկ | AX0292488 | 220540565110000 | **3.000** |
| 12. | Զաքարյան | Լիպարիտ | Մարզիչ | 008852899 | 1510060262320100 | **3.000** |
| 13. | Աղայան | Արմեն | Մարզիչ | AR0563125 | 220543329308000 | **3.000** |
| Ընդամենը | | | | | | **39.000** |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2024 թվականի №2597-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ, 2 ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №0232551) ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27–Ի №954-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ինմասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387- Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «ԳՅՈՒՄՐՈՒ ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ» ՓԲԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Հայկ Հակոբյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №14785 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «ԼԻԼԱՐՄԻՆ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման՝՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի, 2 հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №0232551) երեք մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ՝
   1) 19419.3 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
      **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 2**
   2) 10537.5 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
      **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 2/1**
   3) 25843.2 քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունը հասցեավորել՝
      **ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղի, 2/33**
2. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2015 թվականի մայիսի 27–ի «Ք. Գյումրի Թբիլիսյան խճուղի, 2 հասցեագրությամբ ապակու գործարանը երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №954-Ա որոշումը:

Недействительная подпись

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2596-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 5/7 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 5/7 ՀԱՍՑԵԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 5/7 հասցեի արտադրական նշանակության շինությունները սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Գարիկ Սաշիկի Մկրտչյանին (հիմք՝ ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 21.01.2019թ. N ՇԴ1/0126/04/18 որոշում):

Քաղաքացի Գարիկ Սաշիկի Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 5/7 հասցեի հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 5/7 հասցեի արտադրական նշանակության շինությունների նպատակային նշանակությունը արտադրականից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես հասարակական օբյեկտ փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Գարիկ Սաշիկի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի օգոստոսի 06-ին N 13221 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 5/7 հասցեի 15303,0 (տասնհինգ հազար երեք հարյուր երեք) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու միջոցով համապատասխանացնել Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:
2. Փոփոխել Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոց N 5/7 հասցեի 1373,5 (մեկ հազար երեք հարյուր յոթանասուներեք ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով արտադրական նշանակության շինությունների նպատակային նշանակությունը արտադրականից հասարակականի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես հասարակական օբյեկտ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին քաղաքացի Գարիկ Սաշիկի Մկրտչյանին պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

09.09.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«09» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2595-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՓՈՂՈՑԻ N 20 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 55,56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 55,56 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ 50,42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 20 հասցեի շենքի հարևանությամբ 55,56 (հիսունհինգ ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 55,56 (հիսունհինգ ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 50,42 (հիսուն ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արթուր Լեոնիդի Նազարեթյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշման 3-րդ կետի, 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի և հիմք ընդունելով շինությունը Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող տեղեկանքը N 2023KLPEJV՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցի N 20 հասցեի շենքի հարևանությամբ 55,56 (հիսունհինգ ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 55,56 (հիսունհինգ ամբողջ հիսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին 50,42 (հիսուն ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել քաղաքացի Արթուր Լեոնիդի Նազարեթյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

09.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2594-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/12 ՀԱՍՑԵԻ 312,42 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 2/12 հասցեի 312,42 (երեք հարյուր տասներկու ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս: Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց 2/12 հասցեի 312,42 (երեք հարյուր տասներկու ամբողջ քառասուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության:

06.09.2024

X

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 թվականի N 2593-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԺԵՆՅԱ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N152 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 19.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Ժենյա Սերյոժայի Ռուշանյանին պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N152 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 19.0 (տասնինը) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Ժենյա Ռուշանյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, քաղաքացի Ժենյա Ռուշանյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N16186 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

2. Ճանաչել քաղաքացի Ժենյա Սերյոժայի Ռուշանյանի(ծնված 1956 թվականի հունվարի 08-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N152 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 6.82(վեց ամբողջ ութսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Ընդհանուր բակում գտնվող 12.18 (տասներկու ամբողջ տասնութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով անկառուցապատ հողամասի նկատմամբ ճանաչել ընդհանուր բակի համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

<<06>> սեպտեմբերի 2024 թվականի N 2592-Ա

## << ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ >> ԾՐԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԵՏ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար << Գյումրու քաղաքային ճանապարհներ >> ծրագրի փորձագետ Արթուր Կարապետի Վարդանյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:
2. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ- գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Կարապետի Վարդանյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2024 թվականի N2591-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆԱՀԻՏ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ (1/2), ԱՆՆԱ ՍՏՅՈՊԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ(1/4), ՎԱՐԴՈՒՀԻ ՍՏՅՈՊԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ(1/4) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N152/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 38.39 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1(ՄԵԿ) ԴՈՒՌՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 21.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Քաղաքացիներ Անահիտ Վոլոդյայի Ռուշանյանին (1/2), Աննա Ստյոպայի Ռուշանյանին(1/4), Վարդուհի Ստյոպայի Ռուշանյանին(1/4) պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N152/1 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված են 38.39 (երեսունութ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններ, ինքնակամ բացված է 1(մեկ) դուռ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 21.51 (քսանմեկ ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս:

Քաղաքացի Անահիտ Վոլոդյայի Ռուշանյանի լիազորված անձ Արմենուհի Ղանդիլյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին, նշված հողամասի և շինությունների նկատմամբ սեփականության իրավունք ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում գործող քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, համաձայն Հայաստանին Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023Q2K6EY ծածկագիրը, քաղաքացի Անահիտ Վոլոդյայի Ռուշանյանի լիազորված անձ Արմենուհի Ղանդիլյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականին N7560 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Անահիտ Վոլոդյայի Ռուշանյանին (1/2) (ծնված 1954 թվականի հունվարի 07-ին), Աննա Ստյոպայի Ռուշանյանին(1/4) (ծնված 1985 թվականի նոյեմբերի 01-ին), Վարդուհի Ստյոպայի Ռուշանյանին(1/4) (ծնված 1984 թվականի մարտի 13-ին) պատկանող Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N152/1 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 38.39(երեսունութ ամբողջ երեսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով շինությունները, ինքնակամ բացված 1(մեկ) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 3771 (երեք հազար յոթ հարյուր յոթանասունմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Ճանաչել քաղաքացիներ Անահիտ Վոլոդյայի Ռուշանյանի, Աննա Ստյոպայի Ռուշանյանի, Վարդուհի Ստյոպայի Ռուշանյանի սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N152/1 հասցեի բնակելի տան հողամասին կից, ավել օգտագործվող 9.33(ինը ամբողջ երեսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինության նկատմամբ:
3. Ընդհանուր բակում գտնվող 12.18 (տասներկու ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անկառուցապատ հողամասի նկատմամբ ճանաչել ընդհանուր բակի համասեփականատերերի ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# *ՈՐՈՇՈՒՄ*

**«06» սեպտեմբերի 2024 թվականի N2590-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻ ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՓՈՂՈՑ N147 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 44.73 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Նիկողոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց №147 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված են 44.73(քառասունչորս ամբողջ յոթանասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ:

Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Նիկողոսյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023Y2AJW9 ծածկագիրը և քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Նիկողոսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N202 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Տիգրան Հովհաննեսի Նիկողոսյանին պատկանող Գյումրի քաղաքի Իսահակյան փողոց N147 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 44.73(քառասունչորս ամբողջ յոթանասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

06.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 թվականի N 2589-Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՂԱՅԱՆ ՓՈՂՈՑ N72 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 203.35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հովհաննես Վաղարշակի Աբրահամյանին պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 203.35 (երկու հարյուր երեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններն (որից 86.26( ութսունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ֆիքսված տեխնիկական անձնագրում):

Քաղաքացի Հովհաննես Վաղարշակի Աբրահամյանը դիմել է նշված շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Վաղարշակի Աբրահամյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N13694 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Հովհաննես Վաղարշակի Աբրահամյանին պատկանող Գյումրի քաղաքի Աղայան փողոց N72 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 203.35(երկու հարյուր երեք ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններից, տեխնիկական անձնագրում ֆիքսված 86.26( ութսունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շինությունները ճանաչել օրինական:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

06.09.2024

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2588-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ N 23 ՀԱՍՑԵԻ ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 23 հասցեի կաթսայատունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Նարինե Խաչատուրի Հարոյանին, որտեղ հողամասի մակերեսը գրված է 9761,84 (ինը հազար յոթ հարյուր վաթսունմեկ ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր, որը ստացվել է սխալ թվաբանության արդյունքում:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 06022024-08-0001 վկայականում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 10257,8 (տասը հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր:

Փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, թվաբանական սխալն ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Նարինե Հարոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 02.05.2024թ. N 7695 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել «Ս Ֆոռմատ Սթայլ» ՍՊԸ-ի կողմից կազմված, քաղաքացի Նարինե Խաչատուրի Հարոյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի N 23 հասցեի կաթսայատան հողամասի հատակագիծը՝ 10257,8 (տասը հազար երկու հարյուր հիսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

06.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2587-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 90 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի N 90 հասցեի բնակելի տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ազատուհի Մուքաելի Մնոյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 27062024-08-0027 վկայական), որտեղ հողամասի մակերեսը գրված է 760,07 (յոթ հարյուր վաթսուն ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր, որը ստացվել է սխալ թվաբանության արդյունքում:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 27062024-08-0027 վկայականում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 780,53 (յոթ հարյուր ութսուն ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր:

Փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, թվաբանական սխալն ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Ազատուհի Մուքաելի Մնոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 25.06.2024թ. N 10976 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել «Ս Ֆոռմատ Սթայլ» ՍՊԸ-ի կողմից կազմված, քաղաքացի Ազատուհի Մուքաելի Մնոյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի N 90 հասցեի բնակելի տան հողամասի հատակագիծը՝ 780,53 (յոթ հարյուր ութսուն ամբողջ հիսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

06.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2586-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՇԱՐՔԻ N 2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 1-ին շարքի N 2 հասցեի բնակելի տունը և հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Ժորա Հայկի Էլոյանին (հիմք՝ սեփականության վկայագիր N 10967), որտեղ հողամասի մակերեսը գրված է 285,0 (երկու հարյուր ութսունհինգ) քառակուսի մետր, որը ստացվել է սխալ թվաբանության արդյունքում:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, որի արդյունքում պարզվել է, որ N 10967 վկայագրում նշված հողամասի կողմնային չափերի և կոորդինատների համաձայն հողամասի մակերեսը կազմում է 321,0 (երեք հարյուր քսանմեկ) քառակուսի մետր:

Փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը ճշտելու, թվաբանական սխալն ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Ժորա Հայկի Էլոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 21.08.2024թ. N 14112 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել ԱՁ «Արսեն Նուրիջանյան»-ի կողմից կազմված, քաղաքացի Ժորա Հայկի Էլոյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կարեն Դեմիրճյան փողոցի 1-ին շարքի N 2 հասցեի բնակելի տան հողամասի հատակագիծը՝ 321,0 (երեք հարյուր քսանմեկ) քառակուսի մետր մակերեսով:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերը նշված հողամասի մակերեսի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման նպատակով:

06.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2585-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 4.12 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 1.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Չերնիշևսկի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 4.12(չորս ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 1.1 (մեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարսիսպ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023MGCA9Z ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Չերնիշևսկի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 4.12(չորս ամբողջ տասներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 1.1 (մեկ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարսիսպը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված պարիսպը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանին:

3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:

4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N2584-Ա

**ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲԻ ՊԱՊՈՅԱՆԻՆ (2/7 ՄԱՍ), ՄԿՐՏԻՉ ՕՆԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ (1/7 ՄԱՍ), ԱՍՏՂԻԿ ԳԱՐԵԳԻՆԻ ՎԻՐԱԲՅԱՆԻՆ (1/7 ՄԱՍ), ԶԱՔԱՐԵ ՍԵԴՐԱԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ (1/7 ՄԱՍ), ԱՂԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ (1/7 ՄԱՍ), ՀԱՄԱՅԱԿ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (1/14 ՄԱՍ) ԵՎ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ (1/14 ՄԱՍ) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈԳՈԼԻ ՓՈՂՈՑԻ N 42ա-46 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 326,06 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 81,04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացիներ Սամվել Հակոբի Պապոյանին (2/7 մաս), Մկրտիչ Օնիկի Պապիկյանին (1/7 մաս), Աստղիկ Գարեգինի Վիրաբյանին (1/7 մաս), Զաքարե Սեդրակի Սարգսյանին (1/7 մաս), Աղասի Հարությունի Սահակյանին (1/7 մաս), Համայակ Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) և Կարեն Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Գոգոլի փողոցի N 42ա-46 հասցեի բնակելի տան օրինական հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 521,86 (հինգ հարյուր քսանմեկ ամբողջ ութսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 81,04 (ութսունմեկ ամբողջ չորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

Քաղաքացի Աղասի Հարությունի Սահակյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին նշված շինություններն օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ շինությունները չեն գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-րդ կետի և հիմք ընդունելով քաղաքացի Աղասի Հարությունի Սահակյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հուլիսի 02-ին N 11408 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Սամվել Հակոբի Պապոյանին (2/7 մաս), Մկրտիչ Օնիկի Պապիկյանին (1/7 մաս), Աստղիկ Գարեգինի Վիրաբյանին (1/7 մաս), Զաքարե Սեդրակի Սարգսյանին (1/7 մաս), Աղասի Հարությունի Սահակյանին (1/7 մաս), Համայակ Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) և Կարեն Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Գոգոլի փողոցի N 42ա-46 հասցեի բնակելի տան օրինական հողամասում ինքնակամ կառուցված 326,06 (երեք հարյուր քսանվեց ամբողջ վեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Քաղաքացիներ Սամվել Հակոբի Պապոյանին (2/7 մաս), Մկրտիչ Օնիկի Պապիկյանին (1/7 մաս), Աստղիկ Գարեգինի Վիրաբյանին (1/7 մաս), Զաքարե Սեդրակի Սարգսյանին (1/7 մաս), Աղասի Հարությունի Սահակյանին (1/7 մաս), Համայակ Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) և Կարեն Հակոբի Կարապետյանին (1/14 մաս) պատկանող Գյումրի քաղաքի Գոգոլի փողոցի N 42ա-46 հասցեի բնակելի տան օրինական հողամասում առկա 195,8 (մեկ հարյուր իննսունհինգ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները թողնել ինքնակամ:

3. Ճանաչել քաղաքացիներ Սամվել Հակոբի Պապոյանի (2/7 մաս) (ծնված 1963 թվականի դեկտեմբերի 05-ին), Մկրտիչ Օնիկի Պապիկյանի (1/7 մաս) (ծնված 1955 թվականի մարտի 04-ին), Աստղիկ Գարեգինի Վիրաբյանի (1/7 մաս) (ծնված 1947 թվականի հունիսի 22-ին), Ջաքարե Սեդրակի Սարգսյանի (1/7 մաս) (ծնված 1955 թվականի փետրվարի 17-ին), Աղասի Հարությունի Սահակյանի (1/7 մաս) (ծնված 1951 թվականի հունիսի 21-ին), Համայակ Հակոբի Կարապետյանի (1/14 մաս) (ծնված 1982 թվականի փետրվարի 17-ին) և Կարեն Հակոբի Կարապետյանի (1/14 մաս) (ծնված 1980 թվականի փետրվարի 07-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Գոգոլի փողոցի N 42ա-46 հասցեի բնակելի տան օրինական հողամասին կից, ավել օգտագործվող 81,04 (ութսունմեկ ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով սահմանազատված հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Աղասի Հարությունի Սահակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2583-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 1448-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամասում գտնվող 39.67 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 153.7 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Արման Ներսեսի Մելքոնյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին» N 1448-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, քանի որ որոշման մեջ տեղի է ունեցել վրիպում (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 11/07/2024 թվականի N Կ-11072024-08-0214 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կազաչի պոստ թաղամասում գտնվող 39.67 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության եվ դրա կառուցման ու սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված 153.7 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ քաղաքացի Արման Ներսեսի Մելքոնյանի սեփականության իրավունքի ճանաչման մասին» N 1448-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

   1) Նախաբանում «հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023MJLJZC ծածկագիրը» թվերը և բառերը հանել:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի**

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2582Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ԿԼԱՐԱ ՀՄԱՅԱԿԻ ԽԱՆՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՉԵՐՆԻՇԵՎՍԿԻ ՓՈՂՈՑ № 21 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 34.68 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (29.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական № 13022012-08-0016) Գյումրի քաղաքի Չերնիշևսկի փողոց № 21 հասցեի հողամասում 2001 թվականի մայիսի 15-ից հետո ինքնակամ կառուցված է 34.68 (երեսունչորս ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններ:
Քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ բնակելի շինությունները օրինականացնելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60- րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հուլիսի 12-ին № 11876 թվագրմամբ ) հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 20235JDBE6 ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանին (ծնված 1962 թվականի դեկտեմբերի 27-ին) սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Չերնիշևսկի փողոց № 21 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 34.68 (երեսունչորս ամբողջ վաթսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինությունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 80318 (ութսուն հազար երեք հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Որոշումը կայանալու պահից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում, որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կլարա Հմայակի Խանջյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2581-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 47.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 47.01 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (35.09 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 47.01(քառասունյոթ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 47.01(քառասունյոթ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (35.09(երեսունհինգ ամբողջ ինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինություն:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023GFXNMS ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Վ. Սարգսյան փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 47.01(քառասունյոթ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 47.01(քառասունյոթ ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (35.09(երեսունհինգ ամբողջ ինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Վլադիմիր Գառնիկի Գասպարյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2580Ա

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍՄԲԱՏ ԱՐՏՈՒՇԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՂՈՒԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑ № 138 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 21.30 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 20.57 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանին պատկանող (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր № 3498, 3499 տրված 24.05.2024թ.) Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 138 հասցեի տան հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցված է 21.30(քսանմեկ ամբողջ երեսուն հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ և օրինական հողամասին կից ավել օգտագործում է 20.57(քսան ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամաս, որի վրա առկա շինությունները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը :

Քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված հողամասի և սեփական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, հիմք ընդունելով քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունիսի 5-ին № 9767 թվագրմամբ )՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Ճանաչել քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանի (ծնված 1964 թվականի ապրիլի 4-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 138 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող 20.57(քսան ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա շինությունների նկատմամբ:

2.Քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանին պատկանող Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց № 138 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 21.30(քսանմեկ ամբողջ երեսուն հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:

3.Ճանաչել քաղաքացի Սմբատ Արտուշի Մխիթարյանին (ծնված 1964 թվականի ապրիլի 4-ին) և ընդհանուր բակի մյուս համասեփականատերերի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Ղուկասյան փողոց N 138 հասցեի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից

ավել օգտագործվող 92.27 (իննսուներկու ամբողջ քսանյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սմբատ Արտուշի Մխիթարյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

5. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2579-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՒ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 50.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 50.83 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (46.26 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Կամոի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 50.83(հիսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված է 50.83 (հիսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (46.26 (քառասունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի և <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի 33-րդ կետի՝ հիմք ընդունելով ինքնակամ կառույցը կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հաստատող 2023AXVUVS ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Գյումրի քաղաքի Կամոի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 50.83 (հիսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում ինքնակամ կառուցված 50.83 (հիսուն ամբողջ ութսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (46.26 (քառասունվեց ամբողջ քսանվեց հարյուրերորական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական:
2.Սույն որոշման 1-ին կետում նշված ավտոտնակը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Գրիգոր Սամվելի Մարտիրոսյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը /պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին/:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N2578-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ 103.36 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱՉԱՓՎԱԾ 659.03 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՍՅԱ ՀԱՄԱՅԱԿԻ ԱԴԼՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Լալայան փողոցում գտնվող մինչև 2001 թվականի մայիսի 15-ը 659.03 (վեց հարյուր հիսունինն ամբողջ երեք հարյուրերրոդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 103.36 (մեկ հարյուր երեք ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Ասյա Համայակի Ադլոյանը:
Քաղաքացի Ասյա Համայակի Ադլոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինության նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ, 22.1-րդ կետի, հիմք ընդունելով քաղաքացի Ասյա Համայակի Ադլոյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 26-ին N 1590 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Ասյա Համայակի Ադլոյանի (ծնված 1940 թվականի ապրիլի 17-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Լալայան փողոցի հարևանությամբ գտնվող 400.0 (չորս հարյուր ամբողջ) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 103.36 (մեկ հարյուր երեք ամբողջ երեսունվեց հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինության նկատմամբ:
2. Գյումրի քաղաքի Լալայան փողոցում գտնվող սահմանված չափից ավել օգտագործվող 259.03 (երկու հարյուր հիսունինն ամբողջ երեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Ասյա Համայակի Ադլոյանին, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) դրամ 1.0 քառակուսի մետրի դիմաց, ընդամենը 748078 (յոթ հարյուր քառասունութ հազար յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Ասյա Համայակի Ադլոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի**

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 թվականի N2577-Ա

### 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ ՏՐՎԱԾ N23/24 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կարինե Սուրենի Դավթյանին Գյումրի քաղաքի Գ.Նժդեհի փողոց №15/3 հասցեով բնակելի տան վերակառուցման համար 2024 թվականի ապրիլի 8-ին տրվել է N23/24 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 70/յոթանասուն/ օրով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2024 թվականի ապրիլի 8-ին տրված N23/24 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 70/յոթանասուն/ օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

X

**2024թ. ք.Գյումրի** Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N2576-Ա

**2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ ՏՐՎԱԾ N40/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գայանե Զաքարյանին և Նորիկ Պողոսյանին Գյումրի քաղաքի Անտառավան 5 թաղամաս №72 և Անտառավան 5 թաղամաս №72/2 հասցեներով հողամասերում անհատական բնակելի տան և պարսպի կառուցման համար 2022 թվականի հուլիսի 8-ին տրվել է N40/22 շինարարության թույլտվությունը:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 20/քսան/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2022 թվականի հուլիսի 8-ին տրված N40/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 20/քսան/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2575-Ա

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՏՐՎԱԾ N81/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նելլի Հարությունյանին, Լյուսյա Հարությունյանին, Ալբերտ Հարությունյանին և Աիդա Պարսամյանին Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա №4/8 և Հաղթանակի պողոտա №4 շենքի №17 հասցեով բնակարանի ճակատի արդիականացման և աստիճանների վերակառուցման համար 2022 թվականի սեպտեմբերի 5-ին տրվել է N81/22 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 3/երեք/ ամիս:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. 2022 թվականի սեպտեմբերի 5-ին տրված N81/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

**2024թ. ք.Գյումրի** Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» «սեպտեմբերի» 2024 թվական N 2574-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 2549 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Ժորա Արթուրի Սահակյանը (անձնագիր՝ 55 0794438, տրված՝ 15.06.2022 թ., ՌԴ ԱԳՆ 37402-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 2549 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետում Աննա Խաչատուրի Սահակյանի անունը «Սահակյանի»-ի փոխարեն գրվել է «Վարաքյան» (հիմք՝ ամուսնության վկայական՝ III-СЛ N 496596, տրված 27.05.1995 թ., անձնագիր՝ AR 0651157, տրված՝ 28.03.2018 թ., 016 կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Ժորա Արթուրի Սահակյանի 2024 թվականի օգոստոսի 23-ի դիմումը, (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 14240 թվագրությամբ), **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 2549 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) 1-ին կետի 5-րդ ենթակետում Վարաքյան Աննա Խաչատուրի անվանման մեջ «Վարաքյան» բառը փոխարինել «Սահակյան» բառով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ժորա Արթուրի Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» «սեպտեմբերի» 2024 թվական N 2573 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՄՐԻԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1995 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի «ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 21 ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Էդվարդ Ժորայի Ջանոյանը (անձնագիր՝ AX0366496, տրված՝ 16.07.2024 թ., 016-ի կողմից) Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի հոկտեմբերի 12-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 21 արձանագրային որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման 131-րդ կետի 1-ին ենթակետում Էդվարդ Ժորայի Ջանոյանի անունը «Էդվարդ»-ի փոխարեն գրվել է «Էդուարդ» (հիմք՝ անձնագիր՝ AX0366496, տրված՝ 16.07.2024 թ., 016-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Էդվարդ Ժորայի Ջանոյանի 2024 թվականի սեպտեմբերի 04-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 14829 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

1) Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Գյումրիի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1995 թվականի հոկտեմբերի 12-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 21 արձանագրային որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   2) 131-րդ կետի 1-ին ենթակետում Էդուարդ Ժորայի Ջանոյանի անվանման մեջ «Էդուարդ» բառը փոխարինել «Էդվարդ» բառով:
1. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Էդվարդ Ժորայի Ջանոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«06» սեպտեմբերի 2024 **թվականի** N 2572-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ 8/9 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոց 8/9 հասցեի մառանը սեփականության իրավունքով պատկանում է Կարեն Ռուբենի Քալաշյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14112018-08-0034 վկայականը):

Քաղաքացի Կարեն Ռուբենի Քալաշյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Գործարանային փողոց 8/9 հասցեի 43,34 ( քառասուներեք ամբողջ երեսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով մառանի գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Կարեն Ռուբենի Քալաշյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հուլիսի 02-ին N 11385 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Գործարանային փողոց 8/9 հասցեի 43,34 (քառասուներեք ամբողջ երեսունչորս հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով մառանի գործառական նշանակությունը, որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Կարեն Ռուբենի Քալաշյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

06.09.2024

X

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2024 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<06>> սեպտեմբերի 2024 թվականի N 2571-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՌՈԲԵՐՏ ԱՇՈՏԻ ԵԳՈՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին մասով, 163-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ռոբերտ Աշոտի Եգորյանի 2024 թվականի սեպտեմբերի 4-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Ռոբերտ Աշոտի Եգորյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 2024 թվականի սեպտեմբերի 9-ից:
2. Ամենամյա նվազագույն արձակուրդի մասը՝ 18 աշխատանքային օր՝ 2024 թվականի սեպտեմբերի 9-ից մինչև հոկտեմբերի 2-ը ներառյալ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոբերտ Աշոտի Եգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

06.09.2024

X

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<< 05 >> սեպտեմբերի **2024 թվականի N** 2570-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԼՈՒՍԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՆՈՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ.Տերտերյանի հրավերը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Ռուբենի Սանոյանին գործուղել քաղաք Երևան՝ Բեսթ Վեսթերն Պլյուս Կոնգրես հյուրանոցում կայանալիք << Մասնակցային բյուջետավորումը տեղական մակարդակում >> խորագրով համաժողովին մասնակցելու նպատակով:
2. Գործուղման ժամկետը 1 (մեկ ) օր՝ 2024 թվականի սեպտեմբերի 6-ը:
3. Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով:
4.Սույն որոշման 2-րդ կետում նշված ժամանակահատվածում Լուսինե Ռուբենի Սանոյանի լիազորությունների իրականացումը վերապահել Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Սեպուհի Ջանոյանին:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Ռուբենի Սանոյանին և Սուրեն Սեպուհի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**